

Լ.Մ. ԱՅՐԱՔԵՅԱՆ

**БЕССОЮЗНЫЕ КОНСТРУКЦИИ ИЗЪЯСНИТЕЛЬНЫХ  
ПРИДАТОЧНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ  
(на примере армянской прозы 50–60-х годов XX века)**

Бессоюзно связанные изъяснительные придаточные предложения, наиболее характерные для разговорного языка, нашли свое выражение в художественной речи, начиная с 50-60-х годов XX века. Анализ примеров из прозы указанного периода делает наглядными смыслограмматические особенности подобных конструкций и может способствовать изучению их проявлений по-новому в современном армянском языке.

**Ключевые слова:** сложноподчиненное предложение, изъяснительное придаточное, типы связи, бессоюзные конструкции, интонация.

L.U. HAYRAPETYAN

**ASYNDETIC OBJECT CLAUSES IN LITERARY SPEECH  
(on the example of Armenian prose of the 50-60s of the 20th century)**

Asyndetic object clauses, which are most typically used in the spoken language, appeared in literary speech beginning from the 50-60s of the 20th century. The analysis of the examples from the given period makes the semantic and grammatical characteristics of such structures obvious and can contribute to the study of the new manifestations of the latter in Modern Armenian.

**Keywords:** complex sentence, object clause, types of sentence connectors, asyndetic structures, intonation.

ՀՏԴ 81'367.6

Հ.Լ. ԶՈՐՅԱՆ

**ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ՈՉ ՃԻՇՏ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

Դիտարկվում են գոյականական բառակապակցություններն այլ խոսքի մասերով ծավալելու դեպքում բանավոր խոսքում ի հայտ եկող աղավաղումները և դրանցից խոսափելու ուղիները:

**Առանցքային բառեր.** բառակապակցություն, գերադաս անդամ, ծավալում, լրացում:

Լեզվում բառերն իրար նկատմամբ գտնվում են որոշակի հարաբերության մեջ, որը խոսողության ընթացքում դրսևորվում է բառերի կապակցությամբ:

Ըստ ռուս լեզվաբան Վինոգրադովի՝ «բառակապակցությունը շարահյուսական մի ամբողջություն է՝ առնվազն երկու բառի կապակցություն, որն արտահայտում է մի ամբողջական, թեև անդամազատ հասկացություն» [1]:

Բառերի կապակցումը կատարվում է երկու եղանակով՝ համադասությամբ և ստորադասությամբ: Համադասությամբ կապակցվում են շարահյուսորեն հավասարաթեք, իրար նկատմամբ կախման մեջ չգտնվող բառերը (կյանք և կենցաղ և այլն), ստորադաս կապակցության դեպքում կապակցվող բառերից մեկը շարահյուսորեն գերադաս է:

Գերադաս անդամը թելադրում է կապվող բառի որոշակի ձևը, որը պայմանավորված է տվյալ լեզվում բառերի կապակցելիության յուրահատկություններով և օրինաչափություններով: Բառերի ստորադաս կապակցության մեծ մասն ունի անվանողական արժեք, կիրառվում է որպես շարահյուսական առանձին միավոր:

Ընդունված է բառակապակցություն համարել տվյալ լեզվի օրինաչափություններով կազմված երկու և ավելի լիմաստ բառերի կապակցությունը, որը ցույց է տալիս մեկ հասկացություն՝ **կարմիր գլխարկ, գեղեցիկ ծաղիկ, բարձր որակի աշխատանք** և այլն:

Բառակապակցության հիմքում ընկած է երկու և ավելի բառերի միջև եղած ստորադաս հարաբերությունը՝ ստորադաս կապակցությունը, որը ժամանակակից հայերենում արտահայտվում է առդրությամբ:

Առարկաների, հատկանիշների, առարկայի և հատկանիշի հարաբերությունները ցույց տալու հետ մեկտեղ՝ բառակապակցությունը հանդես է գալիս անվանողական դերով: Իրենց անվանողական դերով բառակապակցությունները հավասարվում են բառերին:

Բառակապակցությունը ձևավորվում է լիմաստ մեկ բառի շուրջը՝ նրա իմաստային ծավալման միջոցով, որը դառնում է բառակապակցության առանցքը՝ գերադաս անդամը: Բառակապակցության արտահայտած հիմնական իմաստը նույնանում է տվյալ առանցքային բառի իմաստի հետ, մյուս բառերը օգնում են տվյալ բառի իմաստն ավելի որոշակի դարձնելուն, լրացնելուն, ամբողջացնելուն, օրինակ՝ **ձմեռային սառնաշունչ քամի** կապակցության մեջ հիմնական իմաստը **քամի** հասկացության դրսևորումն է, իսկ **ձմեռային և սառնաշունչ** բառերը կոնկրետացնում են քամի բառի իմաստը: Կան բառակապակցություններ, որոնք չեն ընդարձակվում՝ ճաշի ժամ, քնելու ժամ, լուռության թուպե, խոսելու պահ և այլն:

Ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության ժամանակակից հայերենի բառակապակցությունները կազմվում են **գոյական** գերադաս անդամով (սեղանի զարդ, գրելու թուղթ, անասելի տանջանք), **բայական** գերադաս անդամով (անհանգիստ քնել, արագ վազել, գիշերով գալ), **ածական** գերադաս անդամով (շատ խելոք, չափազանց գեղեցիկ), **մակբայ** գերադաս անդամով

(չափազանց դանդաղ, ամենից արագ): Հանդիպում են թվական և դերանուն գերադաս անդամ ունեցող բառակապակցություններ (մի քանի հազար, ասածներից բոլորը), սակայն դրանք այնքան էլ շատ չեն: Ժամանակակից հայերենում առավել մեծ տարածում ունեն գոյական գերադաս անդամով բառակապակցությունները, որի լրացումները կարող են լինել գոյականը, ածականը, թվականը, դերանունը, դերբայը, մասամբ նաև մակբայը (գոյ.+գոյ.' սեղանի սփռոց, ած.+գոյ.' կարմիր զգեստ, բարձր մեծ տուն, թվ.+գոյ.' երկու աթոռ, առաջին տեսակի ալյուր, դերան.+գոյ.' իմ գիրքը, մեր տունը, ուրիշի պայուսակը, դերբ.+գոյ.' գրոհելու հրաման, գրելու թուղթ, հոգնած մարդ, վազող զինվոր, մակբ.+գոյ.' արագ քայլ, շտապ գործ) [2]:

Գոյական գերադաս անդամ ունեցող բառակապակցություններն արտահայտում են տարբեր հարաբերություններ՝ ա. պատկանելություն՝ Աշոտի գիրքը, տղայի կոշիկները, եղբորս մեքենան, մեր հարևանի այգին, բ. մասի և ամբողջի հարաբերություն՝ գրքի էջեր, դռան բռնակ, սարի գագաթ, գ. ծագման, սկզբնավորման հարաբերություն՝ լամպի լույս, ծաղկի բույր, Չարենցի գիրքը, Սարյանի նկարը, դ. նյութի, բաղկացության հարաբերություն՝ երկաթի դուռ, ցորենի ալյուր, քարերի կույտ, սոճիների պուրակ, ե. հատկացական-որակային հարաբերություն՝ գինու թաս, կաթի աման, լվացքի տաշտ, թեյի գդալ, գ. տեղային հարաբերություն՝ ականջի օղ, պատի ժամացույց, է. ժամանակային հարաբերություն՝ գիշերվա քամի, ամառվա երկար գիշերներ, ը. գործողության և գործողություն կատարողի հարաբերություն՝ գնացքի ժամանում, տերևների շրշյուն, թ. չափի և սահմանափակման հարաբերություն՝ երկու ժամվա գործ, յոթ օրվա ճանապարհ և այլն: Հաճախ միևնույն գերադաս անդամն ունենում է մեկից ավելի լրացում՝ գնացքի հինգ օրվա ճանապարհ, բնակչության մեծ մասը [3]:

Այսօր բանավոր և գրավոր խոսքում հաճախակի է դարձել ծավալվող բառակապակցություններում լրացումների սխալ տեղում կիրառումը: Դիտարկենք թեյի գդալ, ճաշի գդալ, սուրճի գդալ, աղանդերի գդալ բառակապակցությունները, որոնք կոնկրետ հասկացություններ են նշանակում, ցույց են տալիս հատկացական-որակային հարաբերություն, գերադաս անդամն է գդալ գոյականը: Բանավոր խոսքում այս բառակապակցությունների թվականով արտահայտված լրացումը դրվում է բառակապակցության սկզբում՝ երեք թեյի գդալ, երկու ճաշի գդալ, չորս սուրճի գդալ, մեկ աղանդերի գդալ և այլն: Բառակապակցությունների այս ձևերը թերևս ուսերենից պատճենում են՝ три чайные ложки, две столовые ложки, четыре кофейные ложки, одна десертная ложка ձևերից: Կապակցությունների այս տեսքը, մեր կարծիքով, այնքան էլ տրամաբանական չէ, թվականով արտահայտված լրացումները պետք է դրվեն գդալ բառից առաջ,

քանի որ ցույց են տալիս գդալների քանակը, այլ ոչ թե թեյի, ճաշի, սուրճի, աղանդերի: Այդպես բառակապակցությունները կունենան հետևյալ տեսքը՝ թեյի երեք գդալ, ճաշի երկու գդալ, սուրճի չորս գդալ, աղանդերի մեկ գդալ: Կամ թվական լրացումներից հետո պետք է դրվի հատ բառը, որը չի աղավաղի բառակապակցության իմաստային կողմը, կամ էլ գդալ բառից հետո դրվում է չափ/չափով բառը (երեք հատ թեյի գդալ/ թեյի երեք գդալի չափ/չափով): Եթե այս բառակապակցություններն ընդարձակենք ածականով արտահայտված լրացումով, ապա այն պետք է դնենք գոյական գերադաս անդամից առաջ (թեյի արծաթե գդալ, ճաշի արծաթե գդալ, սուրճի արծաթե գդալ, աղանդերի արծաթե գդալ): Նույնը պետք է անել կապակցությունները դերանուն լրացումով, դերբայով արտահայտված լրացումներով ծավալելիս (թեյի իմ գդալը, ճաշի քո գդալը, սուրճի նրա գդալը, աղանդերի ձեր գդալը, ճաշի մաշված գդալ, սուրճի կտորված գդալ, թեյի մաշված գդալ, աղանդերի կտորված գդալ): Հնարավոր է բառակապակցությունը միաժամանակ ծավալել երկու և ավելի տարբեր խոսքի մասերով արտահայտված լրացումներով (ճաշի արծաթե մաշված գդալ, սուրճի արծաթե կտորված գդալ, թեյի արծաթե մաշված իմ գդալը, սուրճի արծաթե կտորված նրա գդալը, աղանդերի պլաստմասսե ճաքած երկու գդալ):

Դիտարկենք ջրի բաժակ, գինու բաժակ, սուրճի բաժակ, թեյի բաժակ բառակապակցությունները, որոնք նույնպես կոնկրետ հասկացություններ են նշանակում: Այս բառակապակցություններին թվականով արտահայտված լրացումներ ավելացնելիս խոսողից անկախ անպայման ի հայտ է գալիս **հատ** բառը՝ սուրճի վեց հատ բաժակ, թեյի չորս հատ բաժակ, ջրի տասներկու հատ բաժակ, գինու տասը հատ բաժակ: Թվականով արտահայտված լրացումներն առանց հատ բառի այս բառակապակցություններում չեն ընկալվում: Այս բառակապակցություններն ածականով, դերանունով, դերբայով արտահայտված լրացումներով ընդարձակելիս լրացումները դրվում են գոյական գերադաս անդամից առաջ (ջրի մեծ/փոքր բաժակ, գինու մեծ/փոքր բաժակ, սուրճի մեծ/փոքր բաժակ, թեյի մեծ/փոքր բաժակ, ջրի քո բաժակը, գինու նրա բաժակը, սուրճի իմ բաժակը, թեյի իմ բաժակը, ջրի կտորված բաժակ, գինու կտորված բաժակ, սուրճի կտորված բաժակ, թեյի կտորված բաժակ): Հակառակը տրամաբանական չէ: Ինչպես նախորդ բառակապակցություններում, այստեղ էլ կարող ենք բառակապակցություններն ընդարձակել մի քանի լրացումներով միաժամանակ (ջրի կտորված քո մեծ/փոքր բաժակը, գինու կտորված նրա մեծ/փոքր բաժակը, սուրճի կտորված իմ մեծ/փոքր բաժակը, թեյի կտորված նրա մեծ/փոքր բաժակը): Կոշիկի ֆաբրիկա և բասկետբոլի գնդակ բառակապակցություններն առանձին-առանձին կոնկրետ հասկացություններ են նշանակում: Սրանցից յու-

րաքանցյուրը թվականով ծավալելու դեպքում պետք է օգտագործենք հատ բառը՝ կոշիկի երեք հատ ֆաբրիկա/ բասկետբոլի հինգ հատ գնդակ: Ածականով, դերանունով, դերբայով արտահայտված լրացումներով ծավալելիս կունենանք վերը նշված կազմությունները. լրացումները կդրվեն գոյական գերադաս անդամից առաջ (կոշիկի նոր ֆաբրիկա, կոշիկի մեր ֆաբրիկան, կոշիկի թալանված ֆաբրիկա, բասկետբոլի նոր գնդակ, բասկետբոլի ձեր գնդակը, բասկետբոլի պատռված գնդակ): Դիտարկված բառակապացություններում գերադաս անդամն արտահայտված էր գոյականով, որին լրացրել էր գոյականով լրացումը: Գոյ.+գոյ. կապակցություններն ընդարձակվեցին թվականով, ածականով, դերանունով, դերբայով արտահայտված լրացումներով, որոնք կապակցության գերադաս անդամին տվեցին հստակեցնող որակումներ: Կարևոր է, որ ընդարձակվող բառակապակցություններում լրացումները դրվեն ճիշտ տեղում: Դիտարկենք ած.+գոյ. մի կապակցություն և տեսնենք, թե թվականով արտահայտված լրացումը բանավոր խոսքում որտեղ է դրվում սովորաբար և որտեղ պետք է դրվի: Մետաքսե զգեստ կապակցությունում գերադաս անդամը գոյական է, իսկ լրացումը՝ ածական: Բանավոր խոսքում թվականով արտահայտված լրացումով ընդարձակելիս սովորաբար ունենում ենք երկու մետաքսե զգեստ ձևը: Այս կազմությունը ճիշտ կլիներ, եթե երկու բառից հետո լինի **հատ** բառը, և դրանք դրվեն զգեստ բառից առաջ՝ մետաքսե երկու հատ զգեստ: Կապակցությունը դերանունով արտահայտված լրացումով ընդարձակելիս, եթե շեշտում ենք զգեստի որակը, ապա կասենք իմ (քո, նրա) մետաքսե զգեստը, ոչ թե բրդյա զգեստը: Ածական լրացումով ընդարձակելիս այս կապակցությունը բանավոր խոսքում ստանում է երկար մետաքսե զգեստ կազմությունը: Այնինչ պետք է լինի մետաքսե երկար զգեստ ձևով: Ածականով արտահայտված լրացումով բառակապակցությունն ընդարձակելիս ուշադրություն պետք է դարձնել որակական և հարաբերական ածականներին: Բերված օրինակում **մետաքսե** բառը հարաբերական ածական է և **երկար** որակական ածականը պետք է դրվի հարաբերական ածականից հետո: Երբ լրացումները չեն դրվում կապակցության գերադաս անդամից առաջ, ապա կապակցությունը ստանում է այլ բովանդակություն: Դերբ.+գոյ.՝ գրելու թուղթ կապակցությունը թվական, ածական ,դերանուն խոսքի մասերով արտահայտված լրացումներով ընդարձակելիս խոսողից անկախ լրացումը հայտնվում է տեղում՝ գրելու հինգ հատ թուղթ, գրելու մեծ/փոքր թուղթ և այլն:

Բերված օրինակներում առկա սխալները բնորոշ են բանավոր խոսքին, որից էլ աստիճանաբար անցնում են գրավոր խոսքին: Դիտարկման համար ընտրվել էին գոյական գերադաս անդամով նյութի, բաղկացության և հատ-

կացական-որակային հարաբերություններ արտահայտող բառակապակցություններ, քննելու համար, թե այլ խոսքի մասով ընդարձակելու դեպքում ինչ սխալներ են դրսևորվում: Այսպիսի սխալները կանխարգելելու համար, առաջին հերթին, դպրոցի հայոց լեզու առարկայի համապատասխան դասաժամերին ուսուցիչը պետք է ուշադրություն հրավիրի բառակապակցությունների կազմման կանոնների, այլ խոսքի մասերով բառակապակցությունների ընդարձակման օրինաչափությունների վրա: Բուհերում «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի շրջանակում հարկ է ուշադրություն դարձնել այս խնդրին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Виноградов В.В.** Вопросы изучения словосочетаний. “Вопросы языкознания”.- М., 1954.- N3.
2. **Քոսյան Վ.Ա.** Ժամանակակից հայերենի բառակապակցությունները: Ե., 1975:
3. **Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ.** Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Ե., 1976:

#### Ր.Լ. ЗОРЯН

#### НЕТОЧНОЕ УПОТРЕБЛЕНИЕ ЧАСТЕЙ РЕЧИ В УСТНОЙ РЕЧИ

Рассматриваются распространенные другими частями речи субстантивные словосочетания и способы предупреждения проявляющихся искажений.

**Ключевые слова:** словосочетание, главный член, распространение, дополнение.

#### H.L. ZORYAN

#### THE INCORRECT WORD ORDER APPLICATIONS OF PARTS OF SPEECH IN SPEAKING

The distortions exposed in speech at extending the substantive word-combinations by other parts of speech, and the ways of avoiding those distortions are considered.

**Keywords:** word-combination, primary member, extension, secondary member.